զոցուք ելս հնարից յօգուտ ազգին» (Զամչ. Գ. 718)։

Եղիազարը յօժարում է գալու, սակայն առաջիկայ զատկական տօնի պատճառով խընդրում է կաթողիկոսին ներողամիտ լինել, խոստանալով զատկից յետոյ անպայման գալ։ Եւ իրաւի, նա կատարում է իր խոստումը։ Հոգեգալստից յետոյ, երբ պատրաստւում էր Երուսաղէմից ճանապարհ ընկնելու դէպի Պոլիս, ծերունի կաթողիկոսը հիւանդանում է ու մեռնում, որով նրան զրաղեցնող ցաւոտ հարցը մնում է չլուծուած։ Բայց բարեբախտաբար, նրա մահից յետոյ Էջմիածնի միաբանութիւնը տակտ է ունենում եւ հայ ժողովրդի միութիւնն ու խաղաղութիւնը ամէն բանից վեր դերադասելով, Եղիազարին ընտրում է ամենայն Հայոց կաթողիկոս (1682 թ.), որով մէջտեղից վերանում է խռովութեան գլխաւոր **շարժառիթը**։

3.

Ասացինք, որ Զուղայեցին նշանաւոր է ո՛չ միայն որպէս կաթողիկոս, այլ նաեւ որպէս քաղաքական գործիչ, իր հօտի ազատագրութեան համար աշխատող։

Բայց նրա քաղաքական գործունէութիւնը լաւ հասկանալու համար՝ անհրաժեշտ է դէթ հարեւանցիօրէն ծանօթանալ այն պայմաններին, որոնց մէջ ապրեցաւ ու գործեց նա։

Նախ՝ Հայաստանի քաղաքական վիճակը։

Երկու խօսքով եթէ բնորոշելու լինենք այդ վիճակը, պիտի ասենք՝ ուղղակի յուսահատական էր նա, անտանելի— այդ բառերի ամենալայն իմաստով։

Մեր երկիրը, իր քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ, դժբախտութիւնն ունեցաւ ենթարկուելու մի շարք մոնղոլ-թաթարական ցեղերի արշաւանքներին, որոնք 3-4 դար շարունակ, չտեսնուած ու չլսուած անզթութիւններ գործեցին այնտեղ։ Բայց վերջ ի վերջոյ այդ բազմազան ցեղերի միացումից ու խառնումից կազմակերպուեց 2 զօրեղ պետութիւն Հայաստանի երկու կողմերում — Տաճկաստանը եւ Պարսկաստանը։ Սրանք էլ իրենց աւերածութիւններով եւ բարբարոսութիւններով ոչնչով յետ չէին մնում իրենց նախորդներից, մանաւանդ իրենց հպատակ քրիստոնեայ ազգութիւնների նկատմամբ։

Սակայն մասնաւորապէս հայ ժողովրդի դժբախտութիւնն այն էր, որ այդ երկու պետութիւնները մի անգամից կամ գոնէ կարճ ժամանակի ընթացքում չձեւակերպուեցին, իրենց որոշ տերրիտորիայով, որոշ հաստատուն սահմաններով։ Դրա համար հարկաւոր էին նորից մի քանի դարեր, նորից պատերազմներ, նորից արիւն եւ աւեր։ Խորենացու «Սահման քաջաց զէնն իւրեանց»-ի սկզբունքը ամենալայն գործադրութիւնն ունէր թէ մէկ եւ թէ միւս կողմից, այն էլ ամենահրէշային արտայայտութիւններով։ Իսկ այդ անվերջ կռիւների ու աւերածութիւնների թատերաբեմը դժբախտ Հայաստանն էր, որի արեւելեան գաւառները մանաւանդ — Վան, Արծկէ, Արճէշ, Նախիջեւան, Երեւան, Կարս, Լոռի, Գանձակ եւայլն — ձեռքից-ձեռք էին անցնում եւ աւերւում ու ամայանում։ Այս պատերազմների ժամանակ հայ ժողովուրդը կոտորւում էր անհամար քանակութեամբ, տեղահանւում եւ դերի էր տարւում տասնեակ հազարներով, դաւանափոխ էր լինում — մի խօսքով հալւում էր ե՛ւ ֆիզիքապէս, ե՛ւ տնտեսապէս, ե՛ւ բարոյապէս։

Աւերածութեան մասին մի աղօտ գաղափար տալու համար՝ բաւական է յիշել բազմաթիւ դէպքերից միայն մէկը — Շահաբասի արշաւանքը եւ հայերի տեղահանութիւնը դէպի Պարսկաստանի խորքերը, որից յետոյ «անապատ եղեւ վայելուչ եւ քաղցր աշխարհս մեր» — ասում է Դաւրիժեցին։

Ահաւասիկ միայն մէկ փոքրիկ դրուագը հայ ժողովրդի գլխին պատած այդ ահռելի աղէտի հէնց իր՝ ժամանակակից պատմագրի՝ անպաճոյճ նկարագրութեամբ.—

«Իսկ Ալլահվերդի Խանն ելեալ յԵրեւանայ գնաց յԱրծկէ (որ օսմանցոց ձեռին էր. Ի.)։ Իբրեւ եհաս Խանն զամուր միտս բերդականացն թէ ո՛չ տան զերեզն, զարձաւ ի բերդէն եւ յարձակեցաւ ի վերայ գաւառաց աշխարհին եւ զամենայն երկիրն Արծկէոյ հաւասար աւերեաց եւ հրդեհ արկեալ այրեաց, եւ զամենայն արու արս կոտորեաց եւ զինչս եւ զստացուածս՝ զուստերս եւ զդստերս եւ զկանայս յաւար եւ ի գերութիւն առեալ։ Եւ երեալ անտի եկն յԱր-